Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը, մագիստրատուրան և ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ: Սովորել է նաև Texas A&M համալսարանի մագիստրատուրայում: Փոխանակման ծրագրերով սովորել է Օսիյեկի (Խորվաթիա) և Սոդերթորնի (Շվեդիա) համալսարաններում: Վերապատրաստվել է Սինգապուրի Կրթության ազգային ինստիտուտում (NIE), Նանյանգի տեխնոլոգիական համալսարանում (NTU) և մի շարք այլ հեղինակավոր համալսարաններում: Որպես փորձագետ և հետազոտող աշխատել է մի շարք միջազգային կազմակերպություններում, այդ թվում՝ Համաշխարհային բանկում և Հարվարդի համալսարանի բիզնես դպրոցի մասնավոր կապիտալ նախագծում (HBS Private Capital Project):

2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: Հեղինակ և համահեղինակ է 40-ից ավելի գիտական աշխատանքների:

https://orcid.org/0000-0003-2226-6435

ՂՐՂԶՍՏԱՆ-ԻՐԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ՝ ԵԱՏՄ-ԻՐԱՆ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2025.3-52

Հիմնաբառեր. *ԵԱՏՄ, Իրան, Ղրղզստան, Ազատ առևտրի համաձայնագիր, արտահանում, ներմուծում*

Հոդվածում ուսումնասիրվել է Ղրղզստան-Իրան առևտուրը՝ ԵԱՏՄ-Իրան ժամանակավոր ազատ առևտրի համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առաջ և հետո, ինչպես նաև քննարկվել են հնարավոր փոփոխությունները՝ հիմնական ազատ առևտրի համաձայնագրի (ԱԱՀ) ուժի մեջ մտնելուց հետո: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակավոր ԱԱՀ-ից առավելապես օգտվել է Իրանը, քան Ղրղզստանը, քանի որ երկկողմ առևտրում վերջինս ունի քիչ դիվերսիֆիկացված արտահանում, իսկ արտահանման 99%-ը կազմող ապրանքներից ոչ մեկը ենթակա չէ զրոյական կամ արտոնյալ մաքսատուրքի կիրառման: Մինչդեռ Իրանը, օգտվելով ժամանակավոր ԱԱՀ ընձեռած հնարավորությունից, դեպի Ղրղզստան սկսել է արտահանել այնպիսի ապրանքներ, որոնք նախկինում չէր արտահանում, հատկապես բանջարեղենի և պտուղների վերամշակումից ստացված մթերք և ապակե իրեր: Իրանի համար՝ արդեն իսկ ուժի մեջ մտած հիմնական ԱԱՀ-ով, արտահանման տեսանկյունից, մեծ հնարավորություններ են բացվել, մինչդեռ Ղրղզստանի պարագայում դրանք սահմանափակ են՝ պայմանավորված ոչ դիվերսիֆիկացված արտահանմամբ::

Հետաքրքրական է դիտարկել ԵԱՏՄ երկրների և Իրանի միջև ժամանակավոր և հիմնական ազատ առևտրի համաձայնագրերի արդյունքում առևտրի շարժընթացը և զարգացումները: Հոդվածում վերլուծվել են Ղրղզստանի և Իրանի միջև առևտրի կառուցվածքը, դրա զարգացման միտումները՝ ԵԱՏՄ-Իրան ազատ առևտրի ժամանակավոր համաձայնագրի համա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Ղրղզստանից Իրան արտահանումը և ներմուծումը, մլն ԱՄՆ դոլար

տեքստում, ինչպես նաև հնարավոր զարգացումները՝ բուն համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո: Վերջինս ուժի մեջ է մտել 2025 թ. մայիսի 15-ին, քանի որ, պայմանագրի դրույթների համաձայն, բոլոր կողմերն արդեն պարտավորվել են ներքին կանոնակարգերը համապատասխանեցնել համաձայնագրի պահանջներին, և Իրանի ներկայացրած համապատասխանության հաստատումից 60-օրյա ժամկետը լրացել է հենց վերոնշյալ օրը: Այսպիսով՝ ԵԱՏՄ-Իրան ազատ առևտրի ժամանակավոր համաձայնագրին արդեն փոխարինում է բուն համաձայնագիրը, ըստ որի՝ բացառությամբ հավելվածում ընդգրկված որոշ ապրանքների, առևտուրը կողմերի միջև իրականացվելու է առանց մաքսատուրքի: Կանխատեսվում է, որ բուն համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո ԵԱՏՄ-Իրան առևտրաշրջանառությունը կհասնի 12 մլրդ ԱՄՆ դոլարի[1]: Ընդ որում, ԵԱՏՄ-Իրան առևտրի շրջանակում Ղրղզստան-Իրան առևտրաշրջանառության ծավալն ամենափոքրն է:

Գծապատկեր 1-ից կարելի է նկատել, որ երկու երկրների միջև առևտուրը մեծ ծավալներ չունի, և բացառությամբ 2016-2018 թվականների (2016 թվականին պայմանավորված էր Իրանին ընդամենը մեկ ինքնաթիռի վաճառքով, իսկ 2017-2018 թվականներին՝ լոբազգի բույսերի արտահանման շեշտակի աճով), աչքի է ընկնում արտահանման նկատմամբ Իրանից ներմուծման գերակշռությամբ: Այնուամենայնիվ, եթե մինչև 2020 թ. երկու երկրների միջև արտահանման և ներմուծման ծավալները համեմատաբար համաչափ էին, ապա, 2020 թվականից սկսած, երբ Ազատ առևտրի ժամանակավոր համաձայնագիրն (ԱԱՀ) արդեն ուժի մեջ էր մտել, Իրանից ներմուծումն էականորեն գերազանցեց դեպի Իրան արտահանումը, որը 2020-2021 թթ. հասավ պատմական նվազագույնի: Այս անկման հիմնական պատճառներից էին համավարակի հետևանքով սահմանների փակումն ու լոգիստիկ շղթաների խաթարումը, որոնք անդրադարձան գլոբալ առևտրի, այդ թվում՝ Ղրղզստանից Իրան արտահանման վրա: Միաժամանակ, Իրանի տնտեսությունը բախվեց նաև ԱՄՆ-ի պատժամիջոցների խստացման և նավթի միջազգային շուկայի փլուզման հետևանքներին, ինչն առաջացրեց եռակի ճնշում երկրի տնտեսության վրա: Այդ ընթացքում իրանական ռեալն արժեզրկվեց 65%-ով[2]՝ հանգեցնելով ներմուծման թանկացմանը և տեղական ապրանքների համեմատ՝ գնային առումով մրցունակության անկմանը: Նույն ժամանակ արժեզրկված ռեալի պայմաններում արտերկրում բարձրացավ իրանական ապրանքների գնային մրցունակության մակարդակը: Այսպիսով, վերոնշյալ

[1] EAEU official website, https://eec.eaeunion.org/news/andrey-slepnev-polnoformatnoe-soglashenie-o-svobodnoy-torgovle-mezh-du-eaes-i-iranom-vstupit-v-silu-1/



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ղրղզստանից Իրան արտահանումը և ներմուծումը, մլն ԱՄՆ դոլար[3]

8-ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ, 72-սև մետաղներ, 78-արճիճ և իրեր դրանից, 85-էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր, 7-բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ, 84-միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր, 88-թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր, 2-միս և մսից ենթամթերք, 52-բամբակ, 50-մետաքս, 28-անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ, 24-ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ

գործոններով պայմանավորված, Իրանի ոչ նավթային արտահանումն աճեց, իսկ ներմուծումը կրճատվեց: Ու թեև ժամանակավոր ԱԱՀ նպատակն էր նպաստել փոխադարձ առևտրի ընդլայնմանը, վերոնշյալ գործոնների հետ կապված՝ արտահանման ընդլայնման հնարավորությունից առավելապես օգտվեց Իրանը: Մինչդեռ ԵԱՏՄ անդամ երկրների համար վերոնշյալ գործոնները մասնակիորեն չեզոքացրին ժամանակավոր ԱԱՀ հնարավոր առավելությունները՝ սահմանափակելով դեպի Իրան արտահանման ընդլայնման հնարավորության արդյունավետ կիրառումն այդ ժամանակահատվածում: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, ժամանակավոր ԱԱՀ-ից հետո երկու երկրների միջև առևտրաշրջանառությունն էականորեն ավելացել է, թեև ծավալներով դեռևս անհամեմատ ավելի փոքր է, քան ԵԱՏՄ մյուս երկրների առևտուրն Իրանի հետ: Երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը պատմական առավելագույնին է հասել 2023 թ.՝ թե՛ արտահանման, թե՛ ներմուծման առումով: Գծապատկեր 2-ում ներկայացված է Ղրղզստանից Իրան արտահանման ապրանքային կառուցվածքը:

Գծապատկեր 2-ից կարելի է նկատել, որ Ղրղզստանից Իրան արտահանումը դիվերսիֆիկացված չէ՝ ոչ ժամանակավոր ԱԱՀ կիրառումից առաջ, ոչ էլ դրանից հետո, ընդամենը 3 ապրանքախումբ, ըստ HS երկնիշ դասակարգման, կազմում է ողջ արտահանման ավելի քանի 90%-ը: Միայն որոշակի փոփոխության է ենթարկվել արտահանման ապրանքային կառուցվածքը. մասնավորապես՝ եթե մինչև 2017 թ. գերակշռում էր ուտելի ընկույզների արտահանումը, ապա, 2018 թ. սկսած, մեծ է եղել «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ» ապրանքախմբի արտահանման բաժինը, իսկ 2022-2023 թթ. արտահանման հիմնական ապրանքախումբը եղել է բամբակը: Ապրանքային կառուցվածքի նշված փոփոխությունը, սակայն, պայմանավորված չէ ժամանակավոր ԱԱՀ դրույթների կիրառությամբ: Աղյուսակ 1-ից կարելի է նկատել, որ, ըստ HS 6 նիշ դասակարգման, Ղրղզստանից Իրան արտահանման 5 գլխավոր ապրանքախմբերից, որոնք միասին կազմում են դեպի Իրան արտահանման 99%-ը, ոչ մեկը ենթակա չէ 0-ական մաքսատուրքի՝ համաձայն մինչև վերջերս գործող ժամանակավոր ԱԱՀ-ի: Միաժամանակ, արդեն իսկ ուժի մեջ մտած հիմնական ԱԱՀ-ով նշված բոլոր ապրանքախմբերում ընդգրկված ապրանքների հա-

[1] Կազմել է հեղինակը՝ UN Comtrade տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ղրղզստանից Իրան արտահանման 5 գլխավոր ապրանքախմբերը և առևտրային ռեժիմների մաքսային դրույքաչափերը, 2022-2023 թթ.[4]

HS կոդ	Ապրանքախմբի անվանումը	Արտահանում (մլն ԱՄՆ դոլար)	ԱԱԲ	Ժամանակավոր ԱԱՀ	ԱԱՀ
		2022			
520100	Բամբակե նրբաթել՝ չգված	8.4	10	10	0
071332	Լոբազգի բույսերի հատիկներ	4.4	5	5	0
280920	Ֆոսֆորական և պոլիֆոսֆորական թթուներ	0.5	5	5	0
080232	Ուտելի ընկույզներ, թարմ կամ չորացրած, կեղևազերծված	0.05	55	55	55
350190	Կազեին և ածանցյալներ, կազեինի սոսինձ	0,02	5	5	0
		2023			
520100	Բամբակե նրբաթել՝ չգված	13.4	10	10	0
071332	Լոբազգի բույսերի հատիկներ	9.4	5	5	0
841112	Տուրբոռեակտիվ շարժիչ, այլ գազային տուրբին, մասեր	1.2	5	5	0
848250	Գլանաձև առանցքակալներ	0.9	10	10	0
240220	Ծխախոտ պարունակող սիգարներ	0.2	26	26	0

մար կգործի 0-ական մաքսատուրք, բացի ուտելի ընկույզներից, որոնց համար ոչ ժամանակավոր, ոչ հիմնական ԱԱՀ-ով որևէ արտոնություն սահմանված չէ, ավելին, գործում է շատ բարձր՝ 55% մաքսատուրք:

Այսպիսով, բացի ուտելի ընկույզներից, որոնց դեպքում Իրանն ամբողջությամբ բավարարում է ներքին պահանջարկը և բարձր մաքսատուրքերով պաշտպանում ներքին շուկան, մյուս ապրանքախմբերի զրոյական մաքսատուրքը կարող է էապես ընդլայնել Ղրղզստանի արտահանման հնարավորությունները:

Ինչ վերաբերում է Իրանից ներմուծմանը, ապա վերջինս շատ ավելի դիվերսիֆիկացված է. այսպես՝ եթե Ղրղզստանից Իրան արտահանման մեջ ընդամենը 3 ապրանքախումբ կազում է ողջ արտահանման ավելի քան 98%-ը, ապա ներմուծման դեպքում 10 խոշորագույն ապրանքախմբեր միասին՝ ընդամենը 71%-ը: Իրանից Ղրղզստան ներմուծման կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 3-ում, որից կարելի է նկատել, որ վերջինս ժամանակի ընթացքում էական փոփոխությունների չի ենթարկվել: Իրանից ներմուծման կառուցվածքում մշտապես մեծ է եղել պոլիմերային նյութերի, պլաստմասսաների, ուտելի մրգերի, ընկույզների մասնաբաժինը, իսկ 2019 թ. հետո, երբ ժամանակավոր ԱԱՀ-ով որոշ վերամշակված մթերքների մաքսատուրքերը նվազեցվել են 25-100%-ով, ներմուծման մեջ շոշափելի մասնաբաժին է ունեցել նաև բանջարեղենի և պտուղների վերամշակումից ստացված մթերքների ապրանքախումբը:

Աղյուսակ 2-ից կարելի է նկատել, որ HS 6-անիշ դասակարգմամբ Իրանից Ղրղզստան ներմուծման 10 խոշոր ապրանքախմբերից միայն ապակե իրերի դեպքում է, որ նախատեսված է ժամանակավոր ԱԱՀ-ով 0% մաքսատուրք: Ընդ որում, ապակե իրերի ներմուծումն Իրանից սկսել է միայն ժամանակավոր ԱԱՀ ուժի մեջ մտնելուց հետո, նախկինում՝ 11.3% մաքսատուրքի պայմաններում, այդ ապրանքախմբից ոչինչ չէր արտահանվում Ղրղզստան: Բացի այդ, բանջարեղենային պատրաստուկների համար ժամանակավոր ԱԱՀ-ով սահմանվել է 8.3% մաքսատուրք՝ նախկին 11%-ի փոխարեն: Հիմնական ԱԱՀ-ով արդեն մինչև 20 հազար տոննայի (ԵԱՏՄ բոլոր երկրների շուկաներում միասին, ոչ թե միայն ղազախական շուկայում) համար սահմանված է 0%,

[4] Կազմել է հեղինակը՝ UN Comtrade, ԵԱՏՄ-Իրան ժամանակավոր ազատ առևտրի համաձայնագրի, ԵԱՏՄ-Իրան ազատ առևտրի համաձայնագրի և Taxprice foundation տվյալների հիման վրա, https://taxprice.org/hs-customs-tarif/iran/26030010/



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Իրանից Ղրղզստան ներմուծման 5 գլխավոր ապրանքախմբերն ըստ HS երկնիշ դասակարգման, մլն ԱՄՆ դոլար[5]

39-պոլիմերային նյութեր, պլաստմասսաներ և պատրաստի իրեր դրանցից, 08-ուտելի պտուղներ (մրգեր) և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կճեպներ, 34-օճառ, լվացող միջոցներ, քսանյութեր, արհեստական և պատրաստի մոմեր, 69-կերամիկական արտադրանք, 32-դաբաղման կամ ներկող խտանյութեր, ներկանյութեր, գունանյութեր և այլ ներկող նյութեր, ներկեր և լաքեր, թանաք, 25-աղ, ծծումբ, հողեր և քարեր, սվաղային նյութեր, կիր և ցեմենտ, 84-միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական հարմարանքներ, դրանց մասեր, 70-ապակի և ապակուց պատրաստված արտադրանք, 20-մթերքներ՝ ստացված բանջարեղենի, պտուղների (մրգերի) ընկուզեղենի կամ բույսերի այլ մասերի վերամշակումից, 07-բանջարեղեն և ուտելի որոշ արմատապտուղներ և պալարապտուղներ, 73-արտադրատեսակներ սև մետաղներից, 05-կենդանական ծագում ունեցող այլ մթերքներ, 87-վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմից և դրա մասերից

որից հետո դարձյալ կիրառվելու է 8.3% մաքսատուրք:

Աղյուսակ 2-ից երևում է նաև, որ հիմնական ԱԱՀ-ով, էթիլենային պոլիմերներից բացի, նշված մյուս 9 ապրանքախմբերի նկատմամբ կիրառվելու է 0% մաքսատուրք, ինչը լայն հնարավորություններ է ապահովում իրանական արտահանման համար: Այսպիսով՝ թե՛ ժամանակավոր, թե՛ հիմնական ԱԱՀ-ով ավելի մեծ արտահանման հնարավորություններ են ընձեռվել իրանական ապրանքների համար դեպի Ղրղզստանի շուկա, քան հակառակը: Մասնավորապես՝ եթե ժամանակավոր ԱԱՀ-ով Ղրղզստանից Իրան արտահանվող հիմնական ապրանքների (որոնք կազմում են արտահանման մոտ 99%-ը) մաքսատուրքերը չեն նվազեցվել կամ զրոյացվել, իսկ հիմնական ԱԱՀ-ով էլ արտահանման հնարավորությունները սահմանափակվում են հիմնականում բամբակե նրբաթելի և լոբազգի հատիկների ուղղությամբ, ապա Իրանը՝ ավելի դիվերսիֆիկացված արտահանման կառուցվածքով, զգալի շահելու է՝ մի շարք ապրանքների գծով անարգել մուտք գործելով ղրղզական շուկա: Հետագայում Ղրղզստանը, օգտվելով ԱԱՀ ընձեռած հնարավորություններից, գուցե որոշակիորեն փոխի դեպի Իրան իր արտահանման կառուցվածքը, սակայն արտահանման ներկայիս կառուցվածքի դեպքում Ղրղզստանը ԵԱՏՄ-Իրան ԱԱՀ-ից մեծ օգուտներ չի կարող ակնկալել: Միաժամանակ, հարկ է նշել, որ առևտրային համաձայնագրերի նպատակը ոչ միայն արտահանման հնարավորությունների ընդլայնումն է, այլև առավել մատչելի ներմուծման խթանումը, ինչը, ի վերջո, կարող է նպաստել բնակչության բարեկեցությանը՝ մատչելի ապրանքների հաշվին: Հետևաբար՝ Ղրղզստանն Իրանի հետ ԱԱՀ-ի շրջանակում՝ առավել էժան ներմուծման միջոցով, նույնպես ստացել է որոշակի օգուտ:

[5] Կազմել է հեղինակը՝ UN Comtrade տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Իրանից Ղրղզստան ներմուծման 10 գլխավոր ապրանքախմբերը և առևտրային ռեժիմների մաքսային դրույքաչափերը, 2022 թ.[6]

HS կոդ	Ապրանքախմբի անվանում	Ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	ԱԱԲ	Ժամանակավոր ԱԱՀ	ԱԱՀ
200819	Ընկույզներ և այլ սերմեր՝ ավելացված շաքար, այլ քաղցրացուցիչ նյութեր	2.4	10	10	0
847810	Սարքավորումներ ծխախոտի պատրաստման համար	1.7	0	0	0
390190	Էթիլենի պոլիմերներ՝ սկզբնական ձևերով	1.6	6	6	0
320990	Արհեստական ներկ և լաք (լուծելի ոչ ջրային միջավայրում)	1.6	6	6	0
051199	Կենդանական ծագում ունեցող մթերք, որ այլ տեղում նշված չէ	1.5	5	5	0
390130	Էթիլենային պոլիմերներ, սկզբնական ձևերով՝ էթիլեն-վինիլացետատ համապոլիմերներ	1.4	6	6	6
200290	Բանջարեղենային պատրաստուկներ, լոլիկներ (բացառությամբ ամբողջական կամ կտորներով)՝ պատրաստված կամ պահածոյացված ոչ քացախով կամ քացախաթթվով	1.4	11	8.3	0, քվոտավորված
230990	Շների կամ կատուների կեր	1.4	5	5	0
701399	Ապակե իրեր	1.4	11.3	0	0

[6] Կազմել է հեղինակը՝ UN Comtrade, ԵԱՏՄ-Իրան ժամանակավոր ազատ առևտրի համաձայնագրի, ԵԱՏՄ-Իրան Ազատ առևտրի համաձայնագրի և Taxprice foundation տվյալների հիման վրա, https://taxprice.org/hs-customs-tarif/iran/26030010/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. EAEU official website, https://eec.eaeunion.org/news/andrey-slepnev-polnoformatnoe-soglashenie-o-svobodnoy-torgovle-mezhdu-eaes-i-iranom-vstupit-v-silu-1/
2. Free Trade Agreement between the Eurasian Economic Union and its Member States, of the one part, and the Islamic Republic of Iran, of the other part, https://eec.eaeunion.org/upload/medialibrary/77b/FTA-EAEU_Iran.pdf
3. Interim Agreement leading to formation of a free trade area between the Eurasian Economic Union and its Member States, of the one part, and the Islamic Republic of Iran, of the other part, https://eec.eaeunion.org/upload/medialibrary/7bc/Interim-Agreement-EAEU_Iran_final.pdf
4. Iran Economic Monitor; The economy at crossroads, 2021 spring, World Bank, https://documents1.worldbank.org/curated/en/178111623662609713/pdf/Iran-Economic-Monitor-The-Economy-at-a-Crossroads.pdf?utm_source=chatgpt.com
5. Taxprice foundation, https://taxprice.org/hs-customs-tarif/iran/26030010/
6. UN Comtrade, https://comtradeplus.un.org/

Рузанна ТАДЕВОСЯН
Эксперт-научный сотрудник исследовательского центра «Амберд», к.э.н., АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ТОРГОВЛЯ КЫРГЫЗСТАНА С ИРАНОМ В КОНТЕКСТЕ СОГЛАШЕНИЙ О СВОБОДНОЙ ТОРГОВЛЕ МЕЖДУ ЕАЭС И ИРАНОМ

В статье рассматривается торговля между Кыргызстаном и Ираном до и после вступления в силу временного соглашения о свободной торговле между ЕАЭС и Ираном, а также анализируются возможные изменения после начала действия основного соглашения. Анализ показывает, что от временного соглашения больше выиграл Иран, чем Кыргызстан, поскольку последний обладает низкой диверсификацией экспорта, но ни один из товаров, составляющих 99% его экспорта в Иран, не подпадает под действие нулевых или льготных таможенных пошлин. В то же время Иран, воспользовавшись возможностями временного соглашения, начал экспортировать в Кыргызстан товары, которые ранее не экспортировал, особенно продукты переработки овощей и фруктов, а также изделия из стекла. Основное соглашение, которое уже вступило в силу, предоставляет Ирану ещё более широкие экспортные возможности, в то время как выгоды для Кыргызстана остаются ограниченными из-за низкой диверсификации экспорта.

Ключевые слова: *ЕАЭС, Иран, Кыргызстан, соглашение о свободной торговле, экспорт, импорт*

Ruzanna TADEVOSYAN
Expert-researcher at «Amberd» Research Center, PhD in economics, ASUE

ARMENIA AND WORLD

KYRGYZSTAN–IRAN TRADE IN THE CONTEXT OF THE EAEU–IRAN FREE TRADE AGREEMENTS

This paper examines Kyrgyzstan–Iran trade before and after the enforcement of the interim Free Trade Agreement (FTA) between the Eurasian Economic Union (EAEU) and Iran, and discusses the potential changes following the entry into force of the main FTA. The analysis shows that Iran has benefited more from the interim FTA than Kyrgyzstan, due to Kyrgyzstan's limited export diversification. In fact, none of the goods that account for 99% of Kyrgyzstan's exports to Iran are eligible for zero or preferential tariffs. In contrast, Iran has taken advantage of the interim agreement to begin exporting products to Kyrgyzstan that it had not previously supplied, particularly processed fruits and vegetables, and glassware. The full-scale FTA, which has already entered into force, creates even broader export opportunities for Iran, whereas Kyrgyzstan's benefits remain limited due to the lack of export diversification.

Keywords: *EAEU, Iran, Kyrgyzstan, Free Trade Agreement, export, import*